Մեզ մօտ է Թուխ-Մանուկ ուխտատեղին, 1/2 քիլոմեթրի չափ քայլելով ի հարաւ՝ հասանք։

Թուխ-Մանուկ փոքրիկ ձորակի մի ձախ ափին վերայ է։ Այս ձորակն նախ կը հոսի ի հիւսիս արևմուտս, ուխտատեղւոյս մօտ կը շեղուի ի հիւսիս արևելս, որով հանդէպ ուխտատեղւոյս արմունկ մի կը կազմուի։ Այս արմունկը ջրի աջ, իսկ Թուխ-Մանուկ ձախ ափը կը բռնեն։

Թուխ-Մանուկ մի փոքրիկ քարակոյտ է միայն մանր քարերով, մեծ մեծ քարերն Խաստուրայ բողոքական ուսուցիչը բերած՝ տուն և ժողովարան շինած էր, միայն այն տեղ կը մնար քանի խոշոր քարեր, որ ջերմեռանդ ժողովուրդն խնամով հաւաքած՝ մի խորան կազմած էին ուր խունկ ու մոմ վառելու համար։

Ուխտատեղւոյս շուրջն կը գտնուին քանի ուռի նուիրական ծառեր, որոց չորցած ու թափած ճիւղերն անդամ նուիրական և անհպելի (տանել վառելու համար) են, որոց վերայ կապուած կը տեսնուին բիւրաւոր քրջի կտորներ, անասնոց կապեր, կանանց մազեր։

Խաստուրայ Ս. Աստուածածին վանքը ուխտի եկող հասարակութիւնը Թուխ-Մանուկ ևս պիտի գնայ, որ իր ուխտը կատարեալ համարուի. Աստուածածնայ տօնի օրն էր որ ուխտաւորներու բազմութեան հետ դիմած էինք աստ, ուխտաւորները ունէին իւրեանց

---

*անդ վազելու վերայ են՝ ինքն մի ուրիշ քարի կողմն կը վազէ, ուր եւս կը ցանէ եւ այսպէս շարունակ։*

*Տեսնելու է թէ սովորած անասունք որպէս այդ քարերուն կը դիմեն. եթէ աղ եւս ցանուած չլինի, եթէ պատահի որ տէրը աղ չունի, կովը կամ եզը տան շուրջն կը գտնէ մի ոսկոր, երկար մնջոց կը ծամէ, այնպէս որ բերանը փրփուրով կը լեցուի։*